ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » նոյեմբեր 2024թ. No 6080 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/2814-24 առ 01.11.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Ֆլավամեդ դեղահատեր հազի դեմ դեղահատեր 30մգ դեղի N 19176 և N 19190 գրանցման հավաստագրերը համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի նոյեմբերի « 06 » - ի N 6080- Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով

գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Ֆլավամեդ դեղահատեր հազի դեմ	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	դեղահատեր	30մգ; (20/2x10/) բլիստերում	Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489, Բեռլին- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Մենարինի-Վոն Հեյդեն ԳմբՀ, Լեյպցիգեր Շտրասե 7-13, 01097 Դրեզդեն, Գերմանիա- բալք արտադրող	Գերմանիա	Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին	Գերմանիա	ԱԴ	22414 (009473) 31.10.2024
2	Ֆլավամեդ դեղահատեր հազի դեմ	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	դեղահատեր	30մգ; (20/2x10/) բլիստերում	Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489, Բեռլին- փաթեթավորող, որակի (մանրէաբանական) և բաց թողնման հսկող, Բեռլին-Քեմի ԱԳ, Տեմպելհոֆեր Վեգ 83, 12347, Բեռլին, Գերմանիա- բալք արտադրող, 1. Բեռլին-Քեմի ԱԳ, Տեմպելհոֆեր Վեգ 83, 12347, Բեռլին, Գերմանիա, 2. Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489, Բեռլին, Գերմանիա- որակի հսկող (ֆիզիկոքիմիական)	Գերմանիա	Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին	Գերմանիա	ԱԴ	22415 (009473) 31.10.2024